08.06.23 - 08.06.23
13:30
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճ

2023-2024 ուսումնական տարվանից Երևանի պետական համալսարանում մեկնարկում է «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» մագիստրոսական կրթական ծրագիրը, որը նախաձեռնել և ղեկավարելու է Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ, ի.գ.թ. Եղիշե Կիրակոսյանը:

Կրթական ծրագիրը առկա ուսուցմամբ է, տևողությունը՝ 3 կիսամյակ: Այն հնարավորություն է տալու ուսանողներին ծանոթանալու միջազգային իրավունքի սկզբունքներին ու հիմունքներին, ստանալու խոր և համակողմանի գիտելիքներ միջազգային դատարանների և արբիտրաժային վարույթների վերաբերյալ, հասկանալու միջազգային իրավական վեճերի կարգավորման տարբեր ատյանների դերը, գործունեությունն ու առանձնահատկությունները, միջազգային իրավական վեճերի կարգավորման տարբեր փուլերը՝ բանակցություններից մինչև վերջնական վճռի ճանաչումը և կատարումը, գնահատելու ներպետական իրավունքի դերը միջազգային իրավական վեճերի կարգավորման գործընթացում, ինչպես նաև զարգացնելու գրավոր և բանավոր փաստարկումների հմտությունները:

Անգլերենով անցկացվող դասընթացները վարելու են ոլորտում աշխատող փորձառու միջազգային իրավաբաններ ու առաջատար համալսարաններից հրավիրյալ պրոֆեսորներ:

Հունիսի 8-ին՝ ժամը 13:30-ին, ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենալու մագիստրոսական նոր կրթական ծրագրի շնորհանդեսը, որի ընթացքում Եղիշե Կիրակոսյանը և ծրագիրը նախաձեռնած կազմակերպչական թիմը ներկայացնելու են առավել մանրամասն տեղեկություններ և պատասխանելու են բոլոր հարցերին:

Շնորհանդեսին մասնակցելու համար անհրաժեշտ է նախօրոք գրանցվել՝ անցնելով հետևյալ հղումով:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am